

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N
765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2019 թ. N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
20-Ի N 765-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «**Վերահսկվող ապրանքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին**» N 765-Ն որոշման 6-րդ կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր ենթակետերով.

«6.1. Արտահանող սուբյեկտը հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների արտահանման դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները կարող է ներկայացնել փորձագիտական կազմակերպությանը:

6.2. Փորձագիտական կազմակերպությունն երկու աշխատանքային ժամվա ընթացքում դիմողի էլեկտրոնային հասցեին (նշելով հաղորդագրության անհատական դասակարգիչը) պատասխանել արտահանող սուբյեկտին՝ ուղարկելով նույն հաղորդագրության պատճենը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային կայքում տեղադրված էլեկտրոնային հասցեին՝ նշելով ներկայացվող ապրանքի՝ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների շարքին.

ա) ոչ պատկանելիության վերաբերյալ,

բ) պատկանելիության վերաբերյալ,

գ) պատկանելիության որոշման նպատակով փորձաքննություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

6.3. Սույն կարգի 6.2 կետի ա) ենթակետում նշված պատասխանի դեպքում արտահանող սուբյեկտի համար սույն կարգով սահմանված փորձաքննության անսիրաժեշտությունն չի առաջանում:

6.4. Սույն կարգի 6.2 կետի բ) և գ) ենթակետերում նշված պատասխանի դեպքում արտահանող սուբյեկտը պարտավոր է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

6.5. Սույն կարգի 6.2 կետում նշված ծառայությունները փորձագիտական կազմակերպության կողմից մատուցվում են անվճար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կայք-էջում տեղադրել հավատարմագրված փորձագիտական կազմակերպությունների կոնտակտային տվյալները (ներառյալ՝ Էլեկտրոնային հասցեները):
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ երկշաբաթյա ժամկետում ապահովել Էլեկտրոնային նամակների տեսքով հարցումների ուղարկման և ստացման տեխնիկական հնարավորությունները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից: